

ՄԱՂԹԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՐԴԱՅՈՒԱԾ ՃԱՌԸ

### ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Եթէ ի հնումն օրինադրեալ էր Իսրայէլեան տոհմին ըստ Գաւթայ յուրախութիւն եւ ի ցնծութիւն «Փող հարկանել ի զլուխս ամսոց աւուր նշանաւորի», բանի՛ առաւել ի դէպ գայ մեզ այսօր նոյնօրինակ եւ զեր բան զայն ցնծութեամբ կատարել եւ նուազօր երգոց զրուստել զայս օր, որ մի է ի նշանաւորաց աւուրց մերոյ յիշատակի մեծի շնորհի եւ պարգեւաց Աստուածպետական Տեսչութեան, զոր արար մեզ շնորհելով զՏէրոյ մեր զլուխ Եկեղեցւոյ, Հովուապետ մեծ բանաւոր հօտին Քրիստոսի եւ Հայր խնամող տառապեալ որդւոցն Հայաստանի: Արդարեւ ետես Հայաստան յետ Արքայն Գրիգորի արժանաւոր ժառանգ Առաքելական Գահուս. ետես եւ համբուրեաց Հովիւս քաջ անձնաղիր եւ հաւատարիմ, եւ ի նոցունց բազումք ստացան զմեծութիւն երախտադէտ զգացմանց ժողովրդոց յիշատակաց արժանի արդեամբք. ետես ասեմ, եւ ի նոսին առաւելեալ ճըշմարիտ գործովք մխիթարութեան վշտացելոց եւ պայծառափայլս գործելոյ զԱզգս մեր ամենատեսակ փառօր զմեծն Ներսէս ասեմ եւ զնմանխոսն նորին, որ ի սէր Հայրենեաց եւ ի խնամս հայրենի որդւոցն ուրիշական կենօք սրտնչացան. բայց Գու, Հովուապետ մեծ, նկատմամբ պարագայից ժամանակիս, չսխալեմ եմէ ասացից, առաւել եղեր եւ անցուցեր զամենեքումք: Եւ ոչ վայրասպար են եւ մտացածին ինչ զոր զգամրս. վասն զի եմէ երանաշնորհքն այնորիկ սրանչելի երեւեցան ի գործս եւ անմահացան արդեամբք, շնորհ մեծ էր ժամանակին, որոց ի միոյ կողմանէ Արշակունեան հզօր թագաւորութիւն Հայոց աջակից գոհանէր, եւ ի միւսոյ կողմանէ ճոխութիւնք նախարարաց եւ իշխանաց օժանդակէր. իսկ Գուք, Աստուածարեան Տէր, որ յայնչափ բարիս փառաւորել ճըղնէք զազգ մեր, ոչ են Ձեզ առընթեր Պետութիւնք հզօր, այլ Ազգութիւն անգօր. ոչ պերճացելոց փառք իշխանաց ձեռնտուութիւն, այլ միաբանութեան մերոյ անձնանուէր հնազանդութիւն: Ո՛չ եւս Ձեզ գործակից, այլ յոյսն միայն միայնակ ի Ձեզ զօրացեալ. եւ այսպէս ի հարկաւորեալ հանգամանաց վրիպեալ ժամանակիս, զահակալէք ուրախութեամբ, հովուէք հաւատարմութեամբ, եւ խնամէք զձովք զորդիս Մօրս Լուսոյ, զրկեալս ի զեղեցիկ կամանէ: Հողոյն, եւ

գործէք տրնողական եւ անխոնջ վաստակօր զօգուտն ըստ իրաւանց եւ պարտուց. այս է գործ մեծ, որով առաւելօք զամենեքումք. զգեղեցիկ պտուղս Հովուական արդեանց, Աստուածարեալ Տէր, բազրք է մեզ յիշել ի սերկեանս աւուր, յսրում Տէր յերկնից այց արարեալ տառապելոցս շնորհեաց մեզ զՀայրապետոյ մեծ: Հապա եւ մեր այս ծիր երկնային, Սրբագումար Հայրք, պաշտելով սրտի մտօք այսօր, բազկատարած մաղթեսցուք առ բարձրեալն Աստուած, զի նորոգեսցէ զսա միշտ ի կենդանութեան ընդ երկայն աւուրս ծաղկեալ Աստուածահաճոյ եւ Ազգասիրական գործովք ի մխիթարութիւն Մօրս Լուսոյ եւ լրութեան Ազգիս:

Ուրարակիր Գրիգոր Մատթէոսեան

ՃԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆԸ ԿԱՐԴԱՅՈՒԱԾ ՃԱՌԸ:

### ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

#### ԵՒ ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՆԴԻՍՍԿԱՆՔ

Հողագնդի վրայ լուսաւորեալ ազգերի համեմատաբար յառաջադիմութեանց օր ըստ օրէ ծաղկելու զլիսաւոր պատճառն ո՛վ կարող է երկբայել, որ նոցա կարգաւորեալ ուսումնարաններն են եղած, որոնք մարդկային ազգի համար մատակարարել են այնպիսի հոգեկան սնունդ, որոնց միջոցով մարդս կապվում է իւր խղճի, իւր ընկերաց եւ իւր Ստեղծողի հետ:

Ո՛վ կարող է կասկածել իւր սրտում որ, եւ այս ուսումնարանների ծաղկելն ժամանակի պտուղն է եղել, որոյ ճշմարտութիւնը անհերքելի զիտնականներից մինը բարձրաձայն քարոզում է. «Ժամանակի պտուղն կձնանի իւր ժամանակին».

Աներկբայելի՛ ճշմարտութիւն . . .

Ժամանակը չէ, որ անթիւ կոշտ եւ բիրտ ազգերը, որ երբեմն տղիտութեան մէջ ընկզմած լուսաւորութեան ճառագայթներից հեռի էին, այժմ զիտութեանց աղբիւրներ են դառել: Ժամանակին չեն պարտական այն լուսաւոր ժողովուրդներն, որոց մտաց մէջ զանազան դարերում այնպիսի ազգաշահ զազափարներ են ծագել, որոց պտուղն այժմ ամբողջ Եւրոպայ բախտաւորապէս վայելում է: Ժամանակի անխը չէ եղել, որ, նոցա կենաց շրջանը յառաջադէմ քայլերով ապահովացել է:

Ո՛հ նախանձիլի բախտաւորութիւն . . .

Հայեր, այս լուսաւորեալ դարի մէջ մենք եւս այս շնորհներէից զուրկ չենք մնացել, ո՛չ. անս այդ ժամանակի արագ անխը հասել է եւ մեզ համար. մեր կենաց դարեւոր տխրալի տեսարանն փոխուել է. մենք գտնվում ենք արդէն այնպիսի մտածմանց լայնութեան աստիճանի տակ, որ ամենեքեան այժմ ուսման օգուտներն զգալով, բաց են արել իւրեանց հոգւոյ աչքերն սնցեալ դարերի պատմութեանց վրայ. զգում են, որ ժողովրդոց յուզմունքներն նոցա թանձրութեամբ խաւարի մէջ խորխորտակուելով աւերակաց միջից իւրեանց փակատապիրտ որոնելու գլխաւոր պատճառն գիտութիւնն է եղել. եւ վստահ որոյ այս տաան եւ իններորդ լուսաւորեալ դարում աշխարհի ամենայն կողմից բարձրագոյն բարոզում են, ուսումնարաններ, ուսումնարաններ:

Ո՛հ, բաղըր եւ մխիթարի՛չ ձայն . . .

Համայն ազգի այս ցանկութիւնն լրացնելու համար, ճանձ շատաւում է մեր Վեհափառ Հայրապետն, շնորհիւ Ամենողորմած Կայսեր, այս բարեպատեհ ժամում Սուրբ հողիս վերայ նոր Ուսումնարանի հիմն զնելու. որով եւ իւր բազմախոնջ Սուրբ Յակատի վերայ յաւիտենական յիշատակաց արժանի այնպիսի պսակ ընգունեց, որ ամբողջ Հայկաց սերունդը անմոռանալի կերպիւ պիտի փառաւորեն: Վասն զի սորա հիմն նոցա ապագայ որդւոց հաւատը, ազգութիւնը եւ կեանքը պիտի պահպանէ: Սորանից նորա պիտի սպասեն Մեսրոպի, Գաւթի, Գրիգորի եւ Շնորհալոյ նման արթուն հովիւներ. այն, սա պէտք է բղխէ նոցա կենաց զարգացման համար առատ ազրիւրներ, որոց ամէն մի կամիլը հազարաւոր, բիւրաւոր արգասիք պիտի առաջացնեն: Սա պիտի ծնանի վերջապէս լուսաւոր մտորակներ հայոց աշխարհի դարեւոր մութն հորիզոնը լուսաւորելու, որոյ տակ այժմ բիւրաւոր քանքարներ տղի-

տութեան շղթաների դերի եղած գառն եւ արտա-տուալի վիճակի են ենթարկուած:

Այլ ինչ աւելի դիւցադնական գործ կարող է սպասել Ձեզ, Վեհափառ Հայրապետ, բան թէ այս անմահացուցիչ եւ ազգաշահ գործն: Այլ ինչ անմոռանալի յիշատակ կարող էք թողնել աշխարհի վերայ, բացի այս գիտութեանց օրօրոյքը, որի մէջ մատաղ մանկունք Հայոց հողով սնուած ժեծացած, իւրեանց ազգին դրութեան դեղ եւ զարման պիտի լինին: Ձեր այս ազգաշահ գործոյն, Վեհափառ Հայրապետ, բոլոր ժողովուրդը անտարբեր չեն ամենեւին. նորա արդէն պատրաստ են իւրեանց նիւթաւոր օգնութիւններով նպաստամատոյց լինիլ Ձեզ: Սորա կատարման համար նորա իւրեանց վերջին ճիգն չեն խնայել եւ չպէտքէ խնայեն, որտեղից նորա ժամանակին իւրեանց կենսատու պտուղները պէտքէ քաղեն:

Ձեզցէք արդ, Վեհափառ Տէր, ձեզցէք մի յուսահատուիր, Ձեր այդ Աստուածարեալ Սուրբ Աջը, եւ փարատեցէք այս խաւարածած տղիտութեան թանձր բողը Հայաստանի վերայից. կրկին շնորհեցէք, Տէր, շնորհեցէք նորա իւր նախնեաց հին փառքը, իւր Սուրբ Եփեղեցւոյ շրեղութիւնը առաւելացնող նեղ հոգեւորականներ պարդեւեցէք Ազգին, որոնք նոցա հօտին լինին անխոնջ հովիւներ:

Եւ անս բոլոր այս ճգանց փոխարէն, համայն ազգի կողմից մենք մեր խորին շնորհակալութիւններն մատուցանելուց յետոյ, խնդրում ենք Ամենակարող Աստուածանից, որ Ձեր կենաց թելը երկարատեւ անէ. որպէս զի այս դառն աշխատութեամբ ցանած սերմերի պտուղներն վայելէք, ի փառս Աստուծոյ եւ Ազգի:

Կեցցէ՛ մեր Վեհափառ Հայրապետն. կեցցեն նորա խորհուրդներն. կեցցէ՛ եւ մեր քաղըր Հայաստան:

Կ. Ֆոյեւաշեան.

ՍԵՂԱՆԱՏԱՆ ԿԱՐԳԱՅՈՒՄԵՐ

**ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱՂ ՀԱՅՐԱՊԵՏ**

ԵՒ ԲՍԶՄՍԳՈՒՄԱՐ ՀԱՆԳՒՍՍԿԱՆՐ

«Այսօր է որ արար Տէր, եկայք ցնծացուք եւ ուրախ եղիցուք ի տես».

Ա՛հ ցնծութեան սերկեան աւուրս, յոր ախմբեալ մեր բոլոր՝  
Փութաւթ յայանկ զքրտից բերկրանս Հասարակաց մերդ շօր.  
Բ՛նդ անցանել Վ՛եհ Օծութեան Ձեր երկամեան տարեկարծ  
Շ՛նորհօք շօղւոյն կօթնարիւնի ՚ի հովուութիւն շայկազանց: